

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2024-2026**

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ**

**ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ**

Մասիս համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Մասիս համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող եկամուտները և ծախսային ուղղություններն ըստ ոլորտների, որոնք բերելու են Մասիս համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն են ընձեռնելու համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որն իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ, ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է ֆինանսական տարիների համար:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ընդունելու արդյունքում ակնկալվում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում , ոլորտային տարբեր ծրագրերի իրականացման պլանավորված մոտեցում, ուղղակի և ելքային արդյունքների ձեռքբերում՝ միաժամանակ կիրառելով նոր որակի և մակարդակի կառավարում:

Մասիս համայնքի 2024-2026թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

## **Չարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները**

Մասիս համայնքի 2024-2026թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետվողականությունը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
5. Աղբահանության կազմակերպման և կարգավորման բարելավումը, համայնքի տարածքում գործող աղբավայրի գործունեության դադարեցումը:
6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
7. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծումը:
8. Համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև դրանց հիմնանորոգումը և ժամանակակից ստանդարտներին հասցնելը:
9. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:

10. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների կառուցումն ու հիմնանորոգումը:
11. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային կենտրոնների հիմնանորոգումը, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
12. Փողոցային լուսավորության համակարգի ընդլայնումը, արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը:
13. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու քնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
14. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը:
15. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը, կանաչապատ տարածքների ստեղծումը:
16. Նոր կառուցվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծումը:
17. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
18. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
19. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
20. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

**Մասիս համայնքի 2024-2026 թվականների կանխատեսվող  
Եկամուտները**

Մասիս համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծրագրով եկամուտները կանխատեսվել են՝

**2024 թվականի համար՝**

*եկամուտներ՝ 8 151 588, 391 հազար դրամ*

*ծախսեր՝ 8 151 588, 391 հազար դրամ*

**2025 թվականի համար՝**

*եկամուտներ՝ 8 802 388, 061 հազար դրամ*

*ծախսեր՝ 8 802 388, 061 հազար դրամ*

**2026 թվականի համար՝**

*եկամուտներ՝ 6 859 988, 271 հազար դրամ*

*ծախսեր՝ 6 859 988, 271 հազար դրամ*

**Եկամուտների կանխատեսում**

Մասիս համայնքի 2024-2026 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 8 151 588, 391 հազ. դրամ, 8 802 388,06 հազ. դրամ և 6 859 988,27 հազ. դրամ:

Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Մասիս համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:

Ծրագրով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

#### 1. 1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները 2024 թվականի համար կանխատեսվել են 1 294 532,8 հազար դրամի չափով կամ 2023 թվականի համար հաստատված ցուցանիշից 49 259,1 հազար դրամով ավելի, 2025 թվականի համար՝ 1 458 020,2 հազար դրամ կամ 11,2 %-ով ավելի 2024 թվականի նկատմամբ, 2026 թվականին՝ 1 628 093,2 հազար դրամ կամ 10,4 %-ով ավելի 2026 թվականի նկատմամբ:

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 2024 թվականին նախատեսվում է հավաքագրել 726 851,4 հազար դրամ, որը 2023 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ աճել է 16 131,4 հազար դրամով, 2025 թվականին 2024 թվականի նկատմամբ ավել է նախատեսված 16 999,6 հազար դրամով, 2026 թվականին 2025 թվականի նկատմամբ ավել է նախատեսվել 15 149,0 հազար դրամով:

Տեղական տուրքերի գծով 2024 թվականին նախատեսվել են 88 504,4 հազար դրամի մուտքեր, 2023 թվականին նախատեսված 78 909,4 հազար դրամի դիմաց կամ 9 595,0 հազար դրամով ավելի, 2025 թվականին նախատեսվել է 89 842,9 հազար դրամ, 2026 թվականին նախատեսվել է 90 998,5 հազար դրամ:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2024-2026 թվականների համար կանխատեսվել է համապատասխանաբար՝ 20 000.0 հազար դրամ, 22 000.0 հազար դրամ, 23 000.0 հազար դրամ, որից՝

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 4 000,0 հազար դրամ, 5 000,0 հազար դրամ, 5 500,0 հազար դրամ.
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ

կապված համապատասխան գործարքներից՝ 16 000,0 հազար դրամ, 17 000,0 հազար դրամ, 17 500,0 հազար դրամ:

Պետական տուրքերի մասով նախատեսված ցուցանիշների աճը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 2 000,0 հազար դրամ, 4 000,0 հազար դրամ, 5 000,0 հազար դրամ:

### 1. 2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ 2024-2026 թվականներին ծրագրվել են տարեկան 3 108 540,1 հազար դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որը 2023 թվականի հաստատված բյուջեից ավել է 807 686.5, 4 հազար դրամ: Ընդ որում.

- ՀՀ պետական բյուջեից 2024-2026 թվականների համար ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 3 105 489,7 հազ. դրամ:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 3 050,4 հազ. դրամ՝ երաժշտական դպրոցների ազգային, լարային նվագարանների ուսուցման ծախսերի փոխհատուցման նպատակով:

### 1. 3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2024 թվականին ծրագրվել են 510 211,3 հազար դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 464 511,4 հազար դրամի դիմաց կամ 45 699,9 հազար դրամով ավելի: Ընդ որում.

- Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և գույքի վարձակալությունից ակնկալվող եկամուտները 2024 թվականի համար նախատեսվել է 40 129,7 հազար դրամ: Նախատեսված ցուցանիշը կպահպանվի նաև 2025-2026 թվականների համար:
- Տեղական վճարների գծով 2024 թվականին նախատեսվել է 386 508,6 հազար դրամ՝ 2023 թվականի 372 383,7 հազար դրամի համեմատ՝ 16 624,9 հազար դրամով ավելի:
- Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է նաև աղբահանության վճարը, որը ծրագրվել է 168 050,0 հազար դրամի չափով 2023

թվականի նույն ցուցանիշից 3 040,0 հազար դրամով կամ 2%-ով ավելի, գրեթե նույն չափով աճ է նախատեսվել 2025 թվականին 2024 թվականի նկատմամբ և 2026 թվականին 2025 թվականի նկատմամբ:

- Համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 5 000,0 հազար դրամ:
- Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 700,0 հազար դրամի մուտքեր:
- Համայնքային ենթակառուցվածքային մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար նախատեսվել է՝ 185 280,0 հազար դրամ, համայնքային ենթակառուցվածքային արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական և նկարչական ) ծառայություններից օգտվողների համար՝ 19 478,6 հազար դրամ ծառայության վճար:
- Անասնաբույժի ծառայության դիմաց վճար՝ 75,0 հազ. դրամ:
- Համայնքի վարչական տարածքում ինքնական կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 45 000,0 հազար դրամ՝ 2023 թվականին հաստատված ցուցանիշից 7 000,0 դրամի չափով ավելի, որն էլ իր հերթին պայմանավորված է օրինականացման համար դիմումների բավականին մեծ ծավալով:
- Այլ տեղական վճարներ՝ 30 500,0 հազար դրամ:
- Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 4 000,0 հազար դրամ՝ նախորդ տարվա 5 000,0 հազար դրամի դիմաց:
- Բնակչության հատուկ սպասարկումից մուտքերը կանխատեսվել է 8 000,0 հազար դրամ:
- Նախատեսվում է նաև բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումներ ֆոնդային բյուջե 2024 թվականին 900 000,0 հազար դրամ կամ



վարչական բյուջեի եկամուտների 18,3 %-ի չափով, 2025 թվականին 700 000,0 հազար դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 14 %-ի չափով և 2026 թվականին 700 000,0 հազար դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 13,3 %-ի չափով՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

## **2. Ծախսերի կանխատեսում.**

Մասիս համայնքի 2024-2026 թվականների ծախսերը ծրագրվել են 2024 թվականին՝ 8 151 588,391 հազար դրամի չափով, 2025 թվականին՝ 8 802 388, 061 հազար դրամի չափով և 2026 թվականին 6 859 988,271 հազար դրամի չափով:

2024 թվականի ծախսերի ամբողջ ծավալի 49,2 %-ը կամ 4 013 284, 201 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (ներառված չէ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կապիտալ ծախսերին հատկացումները), 50,8 %-ը կամ 4 486 422,56 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե),

Մասիս համայնքի 2024-2026 թվականի ծախսերի ծրագրում կապիտալ ելքերից են հանդիսանում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով 1 679 169.45 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 7.1%-ը: Մասիս համայնքի բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում և հիմնանորոգում, որտեղ 3 տարիների ծախսը նախատեսվում է 1 065 825.0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 4.5%-ը, բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների համար ծրագրված է 379 672.31 հազար դրամ կամ 1.6%-ը, ճանապարհների ասֆալտապատման, խճապատման աշխատանքների 3 տարիների ծախսը ծրագրվում է 3 415 367.4 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 14.3%-ը, բնակարանային շինարարության ոլորտում նախատեսված է 241 949.78 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 1.0%-ը, ջրամատակարարման համար նախատեսված է 1 377 871.4 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 5.8%-ը, փողոցների լուսավորման համակարգի կառուցման, ընդլայնման համար նախատեսվում է 497 304.9 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 2.1%-ը: Առողջապահության ոլորտի ծախսերի համար ծրագրված է 10 440.3 հազար

դրամ, հանգստի և սպորտի ծառայություններին՝ 100 431.0 հազար դրամ կամ ծրագրի 0.4%-ը, մշակույթի տների կառուցման, հիմնանորոգման համար՝ 473 861.6 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 2.0%-ը, հուշարձանների և մշակութային արժեքների պահպանման համար նախատեսված է 11 913.0 հազար դրամ: Համայնքի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման համար նախատեսվում է 1 727 000.0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 7.3%-ը, արտադպրոցական դաստիարակության ոլորտին՝ 10 518.0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 0.1%-ը:

Ծրագրով նախատեսվել է պահուստային ֆոնդ 2024 թվականի համար 1 075 335.0 հազար դրամի չափով, որից հատկացումը ֆոնդային բյուջե կազմում է 900 000.0 հազար դրամ, 2025 թվականի համար 700 000.0 հազար դրամ և 2026 թվականի համար 700 000.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ուղղվելու է ֆոնդային բյուջեի ծախսերին:

**1. Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանում** ծրագրով ծախսերը ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով նախորդ և ընթացիկ տարվա ծախսերը: Այս ծրագրով նախագծում 2024 թվականին ծախսեր են նախատեսվել 1 067 751.0 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 11.8%-ը: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում **աշխատավարձի ֆոնդը**՝ 688 651.0 հազար դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 05-ի N 168-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա: **Պարգևատրման ֆոնդը** նախատեսվել է 220 695.0 հազար դրամ: **Էներգետիկ ծառայությունները** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, մասնավորապես, այս հոդվածով 2024 թվականին նախատեսվել է 52 000.0 հազար դրամ: **Կոմունալ ծառայությունները** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 6 500.0 հազար դրամի չափով: **Կապի ծառայությունները** ներառում են քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և փոստային ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 9 726.0 հազար դրամ: **Ապահովագրական ծախսերը** նախատեսվել են 1200.0 հազար դրամի չափով՝ հիմք ընդունելով

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Մասիսի համայնքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: **Ներքին գործուղումների գծով** ծախսերի համար նախատեսվել է 500.0 հազ. դրամ, իսկ **Արտասահմանյան գործուղումների** գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, ընթացիկ տարվա փաստացի ծախսերը, 2023 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 2000.0 հազ. դրամ հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: **Համակարգչային ծառայությունների** գծով ծրագրվել է 1930.0 հազար դրամ՝ համակարգչային կառավարման տեղեկատվական համակարգչի սպասարկման, ինտերնետային կայք էջի սպասարկման և հաշվապահական հաշվառման ծրագրի սպասարկման համար: **Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների** համար նախատեսվել է 1000.0 հազար դրամ: Թերթերի և ամսագրերի ձեռքբերման համար՝ 250.0 հազ. դրամ: **Ներկայացուցչական ծախսերի** գծով ծրագրվել է 1000.0 հազար դրամ: **Ընդհանուր քնույթի ծառայությունների** գծով նախատեսվել է 7200.0 հազար դրամ՝ քաղաքապետարանի աշխատակազմում փաստաթղթերի արխիվացման, կարման և կազմման, ինչպես նաև համայնքապետարանին պատկանող ծառայողական ավտոմեքենաների ավտովազման, համակարգչային, հեռախոսային և կոնֆերենց համակարգերի սպասարկման ծառայությունների համար: **Մասնագիտական ծառայությունների** գծով նախատեսվել է 1400.0 հազար դրամի չափով ծախս՝ հիմնականում համայնքապետարանի և վարչական նստավայրերի ջեռուցման համակարգերի հակահրդեհային ծառայության և գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության համար: **Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման** գծով ծրագրվել է 8000.0 հազար դրամ՝ համայնքապետարանի և վարչական նստավայրերի վարչական շենքերի ընթացիկ նորոգման համար: **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման** գծով ծրագրվել է 16 500.0 հազար դրամ՝ որը ներառում է համայնքապետարանի ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: **Գրասենյակային նյութեր և հագուստ** հողվածով ծախսերը ծրագրվել են 11 199.0 հազար դրամ, որը նախատեսվել է հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: **Տրանսպորտային նյութերը** ծրագրվել են 22 000.0 հազար դրամի չափով, որը նախատեսված է

համայնքին պատկանող շահագործվող ավտոմեքենաների, ինչպես նաև որոշ բաժինների առանձնահատկություններով պայմանավորված աշխատակիցների անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործմանը հատկացվող վառելիքի համար: **Կենցաղային և հանրային սննդի ծառայությունների** գծով նախատեսվել է 4 000.0 հազար դրամ, որը հիմնականում նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: **Հարուկ նպատակային այլ նյութերի** գծով ծրագրվել է 3 000.0 հազար: **Այլ նպաստներ բյուջեից** հոդվածով նախատեսվել է 8000.0 հազար դրամ, որպես դրամական փոխհատուցում Մասիս համայնքի ավագանու անդամներին: **Պարտադիր վճարների** գծով Համայնքի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 1 000.0 հազ դրամ:

**2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով ծրագրվել է 4 933.0 հազար դրամ ՔԿԱԳ-ի պահպանման ծախս, որի համար պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորության ծառայության իրականացման համար ծախսերի փոխհատուցում՝ հատկացումները կազմում է 3998.0 հազար դրամ:

**3. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 6 924.0 հազար դրամ համայնքների եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման համար:

**4. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների** ծրագրով նախատեսվել է 674 400.2 հազար դրամ, որը նախատեսված է համայնքի բոլոր բնակավայրերում տեղադրված տեսախցիկների անխափան աշխատանքն ապահովելու համար ինտերնետ կապի ծառայության համար 2 352.0 հազար դրամ, քաղաքացիների սպասարկման գրասենյակի հերթագրման սարքի ծրագրային ծպասարկման համար՝ 504.0 հազար դրամ, լրատվական ծառայությունների ձեռք բերման համար՝ 3 250.0 հազար դրամ, ամանորյա տոնական լուսավորման համար՝ 10 000.0 հազար դրամ, քաղաքի գլխավոր տոնաձառի մոնտաժման և ապամոնտաժման համար՝ 1 000.0 հազար դրամ, տրանսպորտային ծառայությունների համար՝ 8 000.0 հազար դրամ, ուսանողներին տեղափոխող տրանսպորտային ծառայության համար 18 000.0 հազար դրամ, համայնքում առկա տեսադիտման սարքերի կարգաբերման ծառայության սպասարկման

համար՝ 6 000.0 հազար դրամ, նոտարական ծախսերի համար՝ 2 500.0 հազար դրամ, պահնորդական ծառայության համար՝ 4 278.0 հազար դրամ, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի քարտեզագրման, չափագրման ծառայությունների համար՝ 20 000.0 հազար դրամ, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման համար՝ 300.0 հազար դրամ, քաղաքի թարմացված քարտեզի ձեռք բերման համար՝ 800.0 հազար դրամ, համայնքային սեփականության շենքերի, շինությունների սեյսմիկ հետազոտության համար՝ 1 000.0 հազար դրամ, համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային ենթակայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման համար՝ 40 000.0 հազար դրամ, զորակոչի և զորահավաքի ժամանակ Համայնքի կողմից զորակոչիկներին առաջնային անհրաժեշտության պարագաների տրամադրման համար 13 000.0 հազար դրամ, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերմանը՝ 2 000.0 հազար դրամ, համայնքում ամանորյա տոնական լուսավորման համար նախատեսվել է 30 000.0 հազար դրամ, „Մասիսի կոմունալ տնտեսություն և բնակչության հատուկ սպասարկում,, ՀՈԱԿ-ին գերեզմանների սպասարկման և համայնքային շենքերի կառույցների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսված է հատկացնել սուբսիդիա 79 573.0 հազար դրամի չափով, Հայաստանի համայնքների միավորմանը անդամավճար՝ 920.0 հազար դրամ, այլ հարկեր՝ 100.0 հազար դրամ, պարտադիր վճարներին՝ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի իրավունքի գրանցման և դատական հայցադիմումների համար 5 500.0 հազար դրամ, վարչական սարքավորումների ձեռք բերման համար՝ 100 184.8 հազար դրամ, այլ սարք սարքավորումների ձեռք բերման համար՝ 12 000.0 հազար դրամ :

**5. Գյուղատնտեսության ոլորտում** անասնաբույժներին աշխատավարձ՝ 19 200.0 հազար դրամ, արտեզյան հորերի պոմպերի էներգետիկ ծախսերի համար՝ 18 000.0 հազար դրամ, հակակարկտային կայանի սպասարկման համար՝ 2 000.0 հազար դրամ, ագրոքիմիական քարտեզագրման աշխատանքների համար՝ 500.0 հազար դրամ

**6. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 1 034 825.0 հազար դրամ՝ որը կուղղվի Մասիս համայնքի բնակավայրերում ոռոգման ցանցերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներին:

7. **Նավթամթերք և բնական գազ** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է Մասիս համայնքի բնակավայրերի գազաֆիկացման համար՝ 379 672.31 հազար դրամ:

8. **Ճանապարհների վերանորոգում, բարեկարգում և պահպանում** ծրագրերով 2024 թվականին նախատեսվել է 1 340 367.4 հազար դրամ:

9. **Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրին 2024 թվականին նախատեսվել է 414 237.6 հազար դրամ՝ աղբահանության վճարների հավաքագրումն իրականացնող պայմանագրային աշխատողների աշխատավարձի և Մասիս համայնքի աղբահանության, չնախատեսված վայրերից աղբի հեռացման և սանիտարական մաքրման համար:

10. **Շրջակա միջավայրի պաշտպանություն** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 55 078.2 հազար դրամ Համայնքի կանաչապատ տարածքների խնամքի և համայնքում թափառող կենդանիների վնասազերծումը կազմակերպելու համար:

11. **Բազմաբնակարան շենքերի տանիքների և նկուղների վերանորոգում** ծրագրերով 2024 թվականին նախատեսվել է ընդհանուր 86 949.78 հազար դրամ՝ որից տանիքների ընթացիկ նորոգման համար՝ 5 000,0 հազար դրամ, նկուղների ջրագծերի և կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար՝ 10 000,0 հազար դրամ և շենքերի տանիքների հիմնանորոգման համար՝ 71 949.78 հազար դրամ:

12. **Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 622 304.9 հազար դրամ արտաքին լուսավորության ցանցի պահպանման և ընդլայնման համար, որից էներգետիկ ծախսերի համար՝ 100 000,0 հազար դրամ, ցանցի պասարկման պահպանման համար 25 000,0 հազար դրամ և վարչական բնակավայրերում լուսավորության ցանցի ընդլայնման համար՝ 497 304.9 հազար դրամ:

13. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 9 500,0 հազար դրամ, որից համայնքում առկա այգիների և խաղահրապարակների նստարանների ընթացիկ նորոգման համար 3 000,0 հազար դրամ, սպորտային միջոցառումների համար նյութերի ձեռք բերում՝ 1 500.0 հազար դրամ, սպորտի բնագավառում տարվա ընթացքում լավագույն ցուցանիշներ ձեռք բերած մարզիկներին և մարզիչներին պարգևատրելու համար 5 000,0 հազար դրամ:

**14. Գրադարանային ծառայություններ** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 55 034.0 հազար դրամ „Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ,-ին սուբսիդիա տրամադրելու համար:

**15. Այլ մշակութային միջոցառումների կազմակերպում** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 52 700,0 հազար դրամ, որը նախատեսվում է համայնքում միջոցառումների անցկացման համար :

**16. Կրոնական և հասարակական այլ ծառայություններ** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 3 500.0 հազար դրամ:

**17. Նախադպրոցական ուսուցում** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 1 827 000.0 հազար դրամ՝ ,որից համայնքում գործող թվով 26 նախադպրոցական հիմնարկներ հաճախող գրեթե 2456 երեխաների պահպանման ծախսերին կհատկացվի սուբսիդիա 1 100 000.0 հազար դրամ, բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով երեխայի սննդի նորմատիվի պահպանումը՝ յուրաքանչյուրին օրական 450 դրամ հաշվարկով: 2024 թվականին ծրագրվում է նաև համայնքու գործող մի շարք մանկապարտեզների կառուցում և հիմնանորոգում, որի համար նախատեսվել է՝ 700 000.0 հազար դրամ, ինչպես նաև 27 000.0 հազար դրամ հիմնանորոգված մանկապարտեզներին գույքի ձեռք բերման համար:

**18. Միջնակարգ կրթության** ծրագրով 2024 թվականին նախատեսվում է 15 000,0 հազար դրամ՝ համայնքում գործող հանրակրթական դպրոցներին աջակցություն տալու նպատակով:

**19. Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով 2024 թվականին նախատեսվել է 223 000.0 հազար դրամ: Ծրագիրը ներառում է համայնքի ենթակայության երաժշտական, սպորտի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի և գեղարվեստի դպրոցների սուբսիդավորումը:

**20. Սոցիալական հատուկ արտոնություններ** ծրագրով 2024 թվականին նախատեսվում է 70 300,0 հազար դրամ, որից սոցիալապես անապահով ընտանիքների հուղարկավորության նպաստերի համար 8000,0 հազար դրամ, այլ նպաստների և ուսման վարձերի փոխհատուցման, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին դրամական աջակցության և Արցախից Հայաստանում ապաստանած ընտանիքներին

կոմունալ ծախսերի օժանդակության համար՝ 60 500,0 հազար դրամ, համայնքում գործող  
 ,, Առաքելություն Հաստատան,, հիմնադրամի կողմից իրականացվող բարեգործական  
 ճաշարանին նվիրատվություն՝ 1200,0 հազար դրամ, Կարմիր խաչին՝ 600,0 հազար դրամ:

Ընդհանուր առմամբ 2024 թվականի համար ներկայացված ընթացիկ ծախսերը  
 ծրագրվում է նախատեսել նաև 2025թվականին՝ սահմանելով համամասնորեն 2 %  
 ծախսերի աճ 2024 թվականի նկատմամբ և 3.3 % ծախսերի աճ 2026 թվականին 2025  
 թվականի նկատմամբ:

**21. Պահուստային ֆոնդը** 2024 թվականի համար նախատեսվում է 1 075 335.0  
 հազար դրամ, որից հատկացում ֆոնդային բյուջե 900 000,0 հազար դրամ, 2025 և 2026  
 թվականներին պահուստային ֆոնդը նախատեսվում է յուրաքանչյուր տարի 700 000,0  
 հազար դրամ, որոնք կուղղվեն ֆոնդային բյուջեի կապիտալ ծախսերին:

**Մասիս համայնքի 2024- 2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի  
 եկամուտները և իրականացվող կապիտալ ծախսերը ամփոփ տեսքով.**

Աղյուսակ  
 1

Համայնքի 2024-2026թթ բյուջեի մուտքերի կանխատեսումը

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2024թ. կանխ	2025թ. կանխ	Հազար դրամ 2026թ. կանխ	Ծավալը բյուջեում %-ով		
					2 024	2025	2026
1	Բյուջետային մուտքեր՝ ընդամենը	8 151 588,39	8 802 388,06	6 859 988,27			
	Վարչական բյուջեի մուտքեր ընդամենը	4 913 284,20	5 015 965,50	5 187 182,88	60,27	56,98	75,62





	Օրենսդիր և գործադիր մարմիններ	0,00	6 208,00	0,00	0,00	0,00	0,00	
1	Մասիս համայնքի Դարակերտ բնակավայրի վարչական շենքի տանիքի հիմնանորոգում		6 208,00					01,1,1
	<b>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>	<b>112 184,80</b>	<b>863 594,66</b>	<b>715 302,99</b>	<b>112 184,80</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	
2	Վարչական սարքավորումներ	100 184,80	841 871,66	715 302,99	100 184,80			01,6,1
3	Այլ սարք, սարքավորումներ	12 000,00			12 000,00			01,6,1
4	Դարբնիկի գերեզմաններ տանող ճանապարհի ցանկապատում		21 723,00					01,6,1
	<b>Ոռոգում</b>	<b>1 034 825,00</b>	<b>31 000,00</b>	<b>0,00</b>	<b>413 930,00</b>	<b>620 895,00</b>	<b>0,00</b>	
5	Մասիս համայնքի բնակավայրերում ոռոգման ցանցերի կառուցում և հիմնանորոգում /սուբվենցիա/	1 034 825,00			413 930,00	620 895,00		04,2,4
6	Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցում/խաչփար, Ռանչպար/		31 000,00		0,00	0,00		04,2,4
	<b>Նավթամթերք և բնական գազ</b>	<b>379 672,31</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>379 672,31</b>	<b>0,00</b>	
7	Մասիս համայնքի բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքներ /սուբվենցիա/	379 672,31			0,00	379 672,31		04,3,2
	<b>Ճանապարհային տրանսպորտ</b>	<b>1 315 367,40</b>	<b>1 055 000,0</b>	<b>1 045 000,0</b>	<b>1 534 238,81</b>	<b>826 128,59</b>	<b>0,00</b>	
8	Մասիս համայնքում ասֆալտապատման աշխատանքներ /սուբվենցիա/	1 315 367,40		1 045 000,0	1 534 238,81	826 128,59		04,5,1
9	Մասիս համայնքի բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքներ		1 000 000,00		0,00	0,00		04,5,1
10	Մասիս համայնքի բնակավայրերի փողոցների խճապատման աշխատանքներ		55 000,00		0,00	0,00		04,5,1
	<b>Բնակարանային շինարարություն</b>	<b>71 949,78</b>	<b>170 000,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>64 754,80</b>	<b>7 194,98</b>	

11	Մասիս համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում /սուբվենցիա/	71 949,78	70 000,00		0,00	64 754,80	7 194,98	06,1,1
12	Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ		100 000,00		0,00	0,00	0,00	06,1,1
<b>Ջրամատակարարում</b>		<b>0,00</b>	<b>820 000,00</b>	<b>557 871,40</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	
13	Մասիս համայնքում խմելու ջրագծերի կառուցում և հիմնանորոգում		120 000,00					06,3,1
14	Մասիս համայնքում ջրահեռացման համակարգի և մաքրման կայանի կառուցում		700 000,00	557 871,40				06,3,1
<b>Փողոցների լուսավորում</b>		<b>497 304,90</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>497 304,90</b>	<b>0,00</b>	
15	Մասիս համայնքում փողոցների լուսավորության ցանցի կառուցում /սուբվենցիա/	497 304,90				497 304,90		06,4,1
<b>Առողջապահություն</b>		<b>0,00</b>	<b>10 440,30</b>	<b>0,00</b>				
16	Հովտաշատ բնակավայրի բուժամբուլատորիայի բակի բարեկարգում		10 440,30					07,6,1
<b>Հանգստի և սպորտի ծառայություններ</b>		<b>0,00</b>	<b>45 800,00</b>	<b>54 631,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	
17	Արևարույր բնակավայրի մանկապարտեզի հարակից այգու հիմնանորոգում		19 900,00					08,1,1
18	Ղուկասավանի կենտրոնական այգու հիմնանորոգում		25 900,00					08,1,1
19	Մարմարաշեն բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում			54 631,00				08,1,1
<b>Մշակույթի տներ</b>		<b>0,00</b>	<b>461 948,60</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	
20	Մասիս համայնքում հասարակական շենքերի կառուցում և կապիտալ նորոգում /մշակույթի տներ սուբվենցիա/		461 948,60					08,2,4
<b>Հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում</b>		<b>0,00</b>	<b>11 913,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	<b>0,00</b>	08,2,7

21	Նորամադր գյուղի հուշակոթողի հարակից տարածքի բարեկարգում		11 913,00					
	Նախադպրոցական կրթություն	727 000,00	1 000 000,00	0,00	237 000,00	490 000,00	0,00	
22	Մասիս համայնքում մանկապարտեզների կառուցում և կապիտալ նորոգում	700 000,00	1 000 000,00		210 000,00	490 000,00		09,1,1
23	Վարչական սարքավորումներ	27 000,00			27 000,00			09,1,1
	Արտադպրոցական դաստիարակություն	0,00	10 518,00	0,00	0,00	0,00	0,00	
24	<<Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի պատուհանների փոխարինում		10 518,00					09,5,1
	Ընդամենը	4 138 304,19	4 486 422,56	2 372 805,39	2 297 353,61	2 878 755,60	7 194,98	0,00

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՆԱԻ



Դ. ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՀ համայնքների մրցանամվառ ծախսերի ծրագրի 2024-2026թթ. վարչական և ֆինոսյան մասերի եկամուտները՝ ըստ ձևակորման աղբյուրների

Տրիդի Nը	Եկամտատեսանկերը	Վնասի	2022 Վասուտ			2023 հաստատված			2024 թվական			2024թ վավաստված և 2023թ հաստատված երկու տարբերություն			2025 թվական			2026 թվական		
			Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական քոյրեք	Ֆոնոսյան քոյրեք		վարչական քոյրեք	Ֆոնոսյան քոյրեք		վարչական քոյրեք	Ֆոնոսյան քոյրեք		վարչական քոյրեք	Ֆոնոսյան քոյրեք		վարչական քոյրեք	Ֆոնոսյան քոյրեք			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
<b>1000</b>	<b>ԸՄԱՐԱՆՈՒՆ ԵՎԱՄԱՍԻՒՆՏՆԵՐ</b>		<b>3,691,003,396.8</b>	<b>3,140,448,472.8</b>	<b>441,654,924</b>	<b>4,299,023,635.0</b>	<b>4,049,838,700.0</b>	<b>945,384,835.0</b>	<b>8,061,688,391.0</b>	<b>4,913,294,201.0</b>	<b>3,138,304,190.0</b>	<b>3,782,584,856.0</b>	<b>969,045,801.0</b>	<b>2,162,910,355.0</b>	<b>8,602,388,061.0</b>	<b>6,016,985,806.0</b>	<b>3,486,422,555.0</b>	<b>6,589,988,271.0</b>	<b>5,167,182,881.0</b>	<b>1,372,806,390.0</b>
1100	Է. Վարչութ եւ Ֆոնոսյան (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150 )	7100	806,098,132.1	906,098,132.1		1,283,273,700.0	1,283,273,700.0	0.0	1,294,832,801.0	1,294,832,801.0		31,259,101.0	38,834,102.0	0.0	1,390,177,306.0	1,390,177,306.0		1,560,094,681.0	1,560,094,681.0	
1110	1.1 Ոսպանի հարկեր աւաւարտ գրւււիք (տող 1111 + տող 1112+տող1113), այլ թւում՝	7131	276,138,461.2	276,138,461		456,624,300.0	456,624,300.0	0.0	469,177,000.0	469,177,000.0		3,652,700.0	3,652,700.0	0.0	536,463,400.0	536,463,400.0		688,096,200.0	688,096,200.0	
1111	Ոսպանարդ համայնքների վարչական տարանքներում գումար շենքերի և շինությունների համար		32,183,622.0	32,193,622		81,196,000.0	81,196,000.0		37,319,000.0	37,313,000.0		-43,886,000.0	-43,886,000.0	0.0	37,313,000.0	37,313,000.0		37,313,000.0	37,313,000.0	
1112	Տողի հարկ համայնքների վարչական տարանքներում գումարի տողի համար		34,998,838.0	34,996,838		91,685,000.0	91,583,000.0		40,332,000.0	40,332,000.0		-51,261,000.0	-51,251,000.0	0.0	40,332,000.0	40,332,000.0		40,332,000.0	40,332,000.0	
1113	Համայնքի քոյրեք մուտքագրվող աւարտ գրւււիքի հարկ		207,846,091.2	207,948,091.2		282,843,300.0	282,843,300.0		381,532,000.0	381,532,000.0		98,688,700.0	98,688,700.0	0.0	457,838,400.0	457,838,400.0		610,451,200.0	610,451,200.0	
1120	1.2 Ոսպանի հարկեր այլ գրւււիք	7136	621,298,898.0	621,298,898		710,720,000.0	710,720,000.0		728,851,400.0	728,851,400.0		16,131,400.0	16,131,400.0	0.0	742,851,000.0	742,851,000.0		768,000,000.0	768,000,000.0	
1121	Օսպանարդ կոնսաւրւււիլոյրների համար		621,298,898.0	621,298,898		710,720,000.0	710,720,000.0		728,851,400.0	728,851,400.0		16,131,400.0	16,131,400.0	0.0	742,851,000.0	742,851,000.0		768,000,000.0	768,000,000.0	
1130	1.3 Ցեղական տողեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311 +տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այլ թւում՝	7145	85,414,382.9	85,414,382.9		78,829,400.0	78,829,400.0	0.0	88,504,401.0	88,504,401.0		6,575,001.0	6,575,001.0	0.0	89,842,908.0	89,842,908.0		90,998,481.0	90,998,481.0	
11301	Համայնքի վարչական տարանքում նոր շենքերի, շինությունների և ոչ բնական շինությունների շինարարության (տեղատուրմ) քոյրեքուրքայն համար		13,800,000.0	13,900,000		8,000,000.0	9,000,000.0		18,000,000.0	18,000,000.0		8,000,000.0	9,000,000.0	0.0	18,500,000.0	18,500,000.0		18,000,000.0	19,000,000.0	
11302	Համայնքի վարչական տարանքում զրոյթայն ու նեղուր շենքերի և շինությունների վերակառուցում, ունեւաւցում, վերականգնում, պղիւսականացում և բարեկարգում պատանքներ կատարվող քոյրեքուրքայն համար		170,000.0	170,000		0.0	0.0		0.0	0.0		0.0	0.0	0.0	0.0	0.0		0.0		
11303	Համայնքի վարչական տարանքում շենքերի, շինությունների և քաղաքայնական այլ օբյեկտների քանդում քոյրեքուրքայն համար		127,500.0	127,500		150,000.0	150,000.0		100,000.0	100,000.0		-60,000.0	-60,000.0	0.0	150,000.0	150,000.0		150,000.0	150,000.0	
11304	Համայնքի վարչ տարանքում պահանքները բարելավելու համար՝ ընդհանուր կառուցում, բարձր և համապատասխան, ավտոմոբիլ ճանապարհի կոնսուրկուր, Խանութ ու մ կրպակ-երում հեղուկ վաղեղի, սեղմված բնական կամ հեղուկ, մաղկ, դաղի վաղեղի քանդում համար		10,630,000.0	10,630,000		9,800,000.0	9,800,000.0		10,280,000.0	10,280,000.0		680,000.0	660,000.0	0.0	10,620,000.0	10,620,000.0		10,780,000.0	10,780,000.0	
11305	Համայնքի վարչական տարանքում, պահանքներում և քանդվածների համայնքների վարչական տարանքում գումարի մակրոստիւսե ստեղծվող վաղեղում կամ ստեղծվածների տեղեկական ավաղարկում և նորոգում ծաղարկայն օբյեկտներում տեղեկական հեղուկների վաղեղի քոյրեքուրքայն համար		2,180,000.0	2,180,000		3,300,000.0	3,300,000.0		3,300,000.0	3,300,000.0		0.0	0.0	0.0	3,300,000.0	3,300,000.0		3,300,000.0	3,300,000.0	
11306	Համայնքի վարչական տարանքում քանակաւոր բնարկների պատասխան խնդրի որոշակի վարում մանրախնայ սոք ու վաղեղի իրականացնող քոյրեքուրքայն համար		100,000.0	100,000		100,000.0	100,000.0		160,000.0	160,000.0		60,000.0	60,000.0	0.0	160,000.0	160,000.0		160,000.0	160,000.0	
11307	Համայնքի վարչական տարանքում ուղեղի և սկիւրուկայն խնդրների և (կամ) օդանավարկ արարարանցի վաղեղի քոյրեքուրքայն համար		27,192,697.1	27,192,697.1		27,386,000.0	27,386,000.0		27,042,000.0	27,042,000.0		-344,000.0	-344,000.0	0.0	27,186,000.0	27,186,000.0		27,234,000.0	27,234,000.0	
11308	Իրականացում անհանց և նմատուրմնարկներին համայնքի վարչական տարանքում «Նուսրի և ծաղարկությունների մասում» Հայաստանի Հանրապետության օբյեկտի ամենակարգ բարձրակարգ ավտոմոբիլ կանանգնարկ քոյրեքուրքայն համար		4,545,286.0	4,545,286		3,423,700.0	3,423,700.0		3,423,700.0	3,423,700.0		0.0	0.0	0.0	3,458,205.0	3,458,205.0		3,495,780.0	3,495,780.0	
11309	Համայնքի վարչական տարանքում ամառի, հանգրոց մուրի, զվարկանքի, շահումով հարկերի և վաղեղարկերի կանանգնարկ օբյեկտների, խարարուրի և քանդուրկերին (աւումանքի) ծաղ 24 00-ից հետո կապաղարկ քոյրեքուրքայն համար		3,820,499.2	3,920,499.2		2,460,000.0	2,450,000.0		2,450,000.0	2,450,000.0		0.0	0.0	0.0	2,460,000.0	2,460,000.0		2,510,000.0	2,510,000.0	
11310	Համայնքի վարչական տարանքում համայնքայն կանանգնարկ հասակատասխան հանդարկ մուրի կանանգնարկ և իրանցն քոյրեքուրքայն համար		2,628,298.6	2,628,298.6		3,544,000.0	3,544,000.0		3,584,000.0	3,564,000.0		20,000.0	20,000.0	0.0	3,584,000.0	3,584,000.0		3,664,000.0	3,664,000.0	
11311	Քաղաքայն բնակավայրերում ավաղարկում, որոշուրք պահանքներ կարգի համապատասխան տեղեկ քնդուրկեր տեղեկ քոյրեքուրքայն համար		0.0			0.0	0.0		0.0			0.0	0.0	0.0	0.0	0.0				
11312	Վաղեղում պահանքներ կարգի ու կարգի իր համայնքի վարչ տարանքում արաղեր զրկար տեղարկող քոյրեքուրքայն համար, քաղաք, մուրքայն, ու հանրապետ, նշանակ, ավտոմոբիլ, ճանապարհի օտարման, շինություն և պաղարկ, զուրուրում տեղա, օրվարի քոյրեքուրքայն համար		17,287,112.0	17,287,112		17,615,700.0	17,615,700.0		17,804,701.0	17,804,701.0		289,001.0	289,001.0	0.0	18,104,701.0	18,104,701.0		18,304,701.0	18,304,701.0	
11313	Համայնքի վարչական տարանքում, վարչական տարանքում, վարչի ու կարգի իր համայնքի վարչ տարանքում արաղեր զրկար տեղարկող քոյրեքուրքայն համար, քաղաք, մուրքայն, ու հանրապետ, նշանակ, ավտոմոբիլ, ճանապարհի օտարման, շինություն և պաղարկ, զուրուրում տեղա, օրվարի քոյրեքուրքայն համար		730,000.0	730,000		400,000.0	400,000.0		400,000.0	400,000.0		0.0	0.0	0.0	400,000.0	400,000.0		400,000.0	400,000.0	

















				ամ ԲԱՄԸ						0.0	0.0	0.0										
				1. Արտադրության բաժանարարություն						0.0	0.0	0.0										
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (խանութներ) կազմակերպություններին	4511	195,672,463.0	195,672,463.0		224,615,000.0	224,615,000.0		223,000,000.0	223,000,000.0									
				- Ընթացիկ դրամաշրջաններ պետական և համայնքների ոչ արտադրական կազմակերպություններին	4637	2,899,800.0	2,899,500.0		0.0	0.0		0.0	0.0									
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	73,482,799.0		73,482,799.0	224,400.0	224,400.0		0.0	0.0									
				- Վարչական սարքավորումներ	5122	965,202.0		965,202.0	4,010,000.0	4,010,000.0		0.0	0.0									
				- Կառավարման անհատական ծախսեր	5134	940,000.0		340,000.0	1,296,000.0	1,296,000.0		0.0	0.0									
3000	10	0		ԱՊՈՒՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		75,580,000.0	75,580,000.0	0.0	73,300,000.0	73,300,000.0	0.0	70,300,000.0	70,300,000.0	0.0	-3,000,000.0	-3,000,000.0	0.0	75,000,000.0	75,000,000.0	0.0	80,000,000.0	80,000,000.0
				այդ բվում																		
3070	10	7	0	Աղիցիական հատուկ արտոնություններ (այդ հատկիչն չպատկանող)		75,580,000.0	75,580,000.0	0.0	73,300,000.0	73,300,000.0	0.0	70,300,000.0	70,300,000.0	0.0	-3,000,000.0	-3,000,000.0	0.0	75,000,000.0	75,000,000.0	0.0	80,000,000.0	80,000,000.0
				ոչինչ																		
3071	10	7	1	Աղիցիական հատուկ արտոնություններ (այդ հատկիչն պատկանող)		75,580,000.0	75,580,000.0	0.0	73,300,000.0	73,300,000.0	0.0	70,300,000.0	70,300,000.0	0.0	-3,000,000.0	-3,000,000.0	0.0	75,000,000.0	75,000,000.0	0.0	80,000,000.0	80,000,000.0
				այդ բվում																		
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269				4,000,000.0	4,000,000.0		0.0	0.0		-4,000,000.0	-4,000,000.0	0.0	0.0	0.0		0.0	0.0
				- Դուրյակալիզացիայի կառավարման ըրջքներ	4726	8,475,000.0	6,475,000.0		8,000,000.0	8,000,000.0		8,000,000.0	8,000,000.0		0.0	0.0	0.0	8,500,000.0	8,500,000.0		8,000,000.0	9,000,000.0
				- Այլ նպատակները բյուջեի	4729	87,305,000.0	67,305,000.0		69,800,000.0	59,500,000.0		60,500,000.0	60,500,000.0		1,000,000.0	1,000,000.0	0.0	64,000,000.0	64,000,000.0		68,000,000.0	68,000,000.0
				- Կրթությունները այլ շահույթ չի նպատակներ կազմակերպություններին	4819	1,800,000.0	1,800,000.0		1,800,000.0	1,800,000.0		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	2,500,000.0	2,500,000.0		3,000,000.0	3,000,000.0
3100	11	0		ՎՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				708,035,140.0	708,035,140.0	0.0	1,089,845,300.0	1,089,845,300.0	0.0	363,810,160.0	363,810,160.0	0.0	950,000,000.0	950,000,000.0	0.0	950,000,000.0	950,000,000.0	
				այդ բվում																		
3110	11	1	0	<< Կապիտալը և հասցիների ամրապահում ձևով				708,035,140.0	708,035,140.0		1,089,845,300.0	1,089,845,300.0		363,810,160.0	363,810,160.0	0.0	950,000,000.0	950,000,000.0		950,000,000.0	950,000,000.0	
				ոչինչ																		
3112	11	1	2	<< Հասցիների պահուստային ձևով				708,035,140.0	708,035,140.0		1,089,845,300.0	1,089,845,300.0		363,810,160.0	363,810,160.0	0.0	950,000,000.0	950,000,000.0		950,000,000.0	950,000,000.0	
				այդ բվում																		
				- Պահուստային վիճակներ	4891			706,035,140.0	706,035,140.0		1,089,845,300.0	1,089,845,300.0		363,810,160.0	363,810,160.0	0.0	950,000,000.0	950,000,000.0		950,000,000.0	950,000,000.0	
				- Հանդիպում պահուստային ձևովի ձեռնարկ	x			700,000,000.0	700,000,000.0		900,000,000.0	900,000,000.0		200,000,000.0	200,000,000.0	0.0	700,000,000.0	700,000,000.0		700,000,000.0	700,000,000.0	